

բարի, կամ զի՞նչ վայելուչ, այլ բնակել եղբարց ի միասին^ա: 7 Եւ առ սաստկապէս բեկումն թշնամեացն եւ բարձրանալ սրբոյ եկեղեցւոյ՝ ասէին սաղմոսելով. *Նոքա խափանեցան եւ անկան, մեք յարեաք եւ ուղիղք եղաք*^բ. Եւ *ամենայն եղջիւրք*² *մեղաւորաց փշրեցան, եւ բարձր եղել եղջիւր արդարոյն*^գ: 8 Եւ շնորհակալութեամբ գովութիւն ի մեջ առեալ ասէին. *Այլ մեք ժողովուրդք եւ խաշն արաւտի քո, խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան. ազգէ յազգ պատմեսցուք զաւրինութիւնս քոր*:

39. Իսկ յետ աւուրց ինչ բազմաց³ անցելոց, տեսեալ իմաստախնդիր մարդոց եւ հանճարեղ անձանց զպսակումն քաջ սեպիին Մամիկոնեից զսրբոյն Վասակայ, զեղբար զաւրավարին Զայոց Վահանայ՝ անդէն եւ անդ ծանեան, թէ վասն զի մերձ ուրեմն էր կատարումն սրբոյն. որ եւ խնդրեաց յԱստուծոյ սուրբն Վասակ՝ տեսանել ի մարմնի զեկս անձկալի եղբարն իւրոյ Վարդայ, եւ ապա զաւր ըղծի խնդրոյ իւրոյ ըմբռնել ցնծալով: 2 Եւ ամենահզաւրն Աստուած եղել փութով կատարիչ խնդրոյ սրբոյն իւրոյ, ոչ ինչ յերկարեալ յապաղեաց զկամս առնն, այլ վաղվաղակի եւ ճեպով ընկալեալ զխնդիրն, եւ ածեալ զեղբայրն զՎարդ եւ ցուցեալ նմա եւ ամենեցուն՝ եթող ողջամբ առ մնացեալ կենդանի ծառայսն իւր, եւ զսուրբ վկայն իւր զՎասակ փոխեալ առ ինքն՝ պսակեալ բնակեցոյց յարքայութեան խորանսն, ընդ հրեշտակս յերկինս⁴:

3 Գային հասանէին այնուհետեւ ի Ծաղկետուն. եւ կամեցեալք առ վայր մի հանգչել ի ջերմկին որ կոչի Վարշակի՝ գայր հասանէր դեսպան ի թագաւորէն Վրաց Վախթանգայ⁵, թէ «Գունդ սաստիկ եհաս յերկիրս Վրաց, եւ իմ տեսեալ, թէ ոչ եմ կարող կալ առաջի՝ խոյս տուեալ ի լերինս Զայոց, մաւտ ի սահմանակցութեանն Վրաց՝ մնամ ձեզ»: 4 Եւ նամակ ունէր տուեալ ի լերինս Զայոց, մաւտ ի սահմանակցութեանն Վրաց՝ մնամ ձեզ»: 5 Եւ նամակ ունէր գրեալ ի Վախթանգայ խաբէութեամբ, թէ «Յոն գնդի հրաման ետու գալ, եւ չեւ եւս հասին. բայց մինչ դուք գայք՝ հասանեն, եւ այնուհետեւ դուք եւ մեք եւ Յոնք զնոսա կորուսանեմք: 6 Բայց թուի ինձ, թէ յորժամ Յոն հա-

ա Սաղմ. ՃԼԲ 1

1 ՏՏ. եղեաք

բ Սաղմ. ԺԹ 9

2 Զ. եղջերք... եղջեր

գ Սաղմ. ԶԴ 11

դ Սաղմ. ԶԸ 13

3 Թերեւս՝ ոչ բազմաց

4 Զ. ի յերկինս

5 ՏՏ. խառն՝ Վախթանկ եւ Վախթանգ. Զ. միշտ այսպէս